Ա. Վ. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ, Հ. Ա. ԳԱԼՈՒՍՏՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՎՐԱՍՏԱՆԻ ԿՈՄԻՏԵԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ (1921—1925 թթ.)

1921 թ. Հայաստանի հասարակական-քաղաքական կյանքի ուշագրավ երևույթներից էր լայն ու անկեղծ համակրանքի և աջակցության այն հոսանքը, որ սկսվեց մտավորականության մեջ՝ դեպի նորաստեղծ Սովետական Հայաստանի կառավարությունն ու հայ ժողովուրդը։

Հայաստանի օգնության կոմիտեի (ՀՕԿ) ստեղծման համար կային լուրջ պատճառներ։ Երկարամյա պատերազմների հետևանքով Հայաստանի ժողովրդական տնտեսությունը քայքայվել էր, որն ավելի խորացավ դաշնակների տիրապետության ժամանակ։

Ծանր, կորստաբեր հետևանք ունեցան հայ ժողովրդի համար դաշնակների կողմից նյութված վերջին քաղաքացիական կռիվները։ Այս ամենին ավելացավ նաև այն, որ 1921 թ. երկիրը ենթարկվեց բնական աղետի՝ երաշտն ու կարկուտը ոչնչացրին բերքը, այն, ինչի վրա հույս էր դրել հայ գյուղացին իր ապրուստի համար։

1921 թ. Հայաստանի բնակչության քառորդ մասը սովի էր մատնված։ Գոյացել էր գաղթականների և որբերի մեծ բազմություն, որը զուրկ էր ապրուստի չնչին միջոցներից։ Պահանջվում էր մեծ օգնություն, ինչպես պարենային, նույնպես և բարոյական։

Սովետական Հայաստանի կառավարությունը կոմկուսի ղեկավարությամբ ձեռք առավ բոլոր միջոցները երկիրը սովից ու քայքայումից դուրս բերելու և վերաշինելու համար։ Սակայն երկրի ներքին ռեսուրսները բավական չէին սովը հաղթահարելու համար։

Հայ ժողովրդի հույսը նաև դրսի ուժերի վրա էր։ Այդ օրերին նրան օգնության ձեռք մեկնեց Սովետական Ռուսաստանը, որը չնայած ինքն էլ գրտնվում էր տնտեսական-պարենային շատ ծանր պայմաններում, բայց Հայաստանին ցույց տվեց բազմակողմանի· անշահախնդիր, եղբայրական օգնություն։ Հայաստանի աղետյալ բնակչությանը լուրջ օգնություն ցույց տվեց նաև սփյուռքի հայությունը։ Այս օգնությանը առավել կազմակերպված բնույթ տալու նպատակով Հայաստանի ու Վրաստանի հայ հասարակական գործիչները 1921 թ. սեպտեմբերին Երևանում հիմնադրեցին «Հայաստանի օգնության կոմիտե» (ՀՕԿ)։

ՀՕԿ-ի հիմնադիր նստաշրջանը բացվեց 1921 թ. սեպտեմբերի 13-ին Ա. Երզնկյանի նախագահությամբ։ Այդ ժողովին մասնակցում էին հանրապետության հասարակական, քաղաքական, գիտության և մշակույթի 40 անվանի գործիչներ, այդ թվում՝ Հովհաննես Թումանյանը, Լեոն, Դ. Դեմիրճյանը, Ա. Կարինյանը, Պ. Արելյանը, Գ. Վարդանյանը, Ս. Տեր-Գաբրիելյանը, Ց. Խանզադյանը և շատ ուրիշներ։

Պարզաբանելով ՀՕԿ-ի ստեղծման շարժառիթները, ՀՍՍՀ հողժողկոմ Ա. Երզնկյանն ասաց. «Ընկերնե՛ր, հասարակական գործիչների մի խմբի մեջ միտք է հղացել օգնություն հասցնել Խորհրդային Հայաստանի կառավարության այն բոլոր ձեռնարկումներին, որոնք ուղղված են բնակչության տնտեսական դրության բարելավման և երկրի տնտեսական վերաշինության գործին։ Ահա այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ համարվեց հայ ժողովրդի բոլոր կենսունակ ուժերը համախմբել և կազմել մի այնպիսի կոմիտե, որն ի վիճակի լինի իրագործել այդ խնդիրները»։

Ժողովում ընտրված հանձնաժողովի առջև խնդիր դրվեց շտապ կարգով, մինչև հաջորդ նիստը, մշակել կոմիտեի կանոնադրության նախագիծը։ Հանձնաժողովի կազմի մեջ էին՝ Ա. Երզնկյանը, Ալ. Պապովյանը, Գ. Տեր-Ռուբինյանը, Լ. Թումանյանը, Ալ. Տեր-Վարդանյանը[2]։

Սեպտեմբերի 14-ին ժողովն ընդունեց Հայաստանի օգնության կոմիտեի ստատուտը, որը հաջորդ օրը հաստատվեց ՀՍՍՀ ժողովրդական կոմիսարների խորհրդի կողմից։

Հիմնադիր ժողովի որոշմամբ, Կոմիտեն անվանվեց «Հայաստանի օգնության կոմիտե», որի անմիջական խնդիրն էր՝ օգնել Հայաստանի սովյալ ազգաբնակչությանը և օժանդակել երկրի ընդհանուր շինարարության գործին[3]։

ՀՕԿ-ի կարևոր խնդիրներից էր նաև՝ սփյուռքահայ աշխատավորներին կապել Սովետական Հայաստանի հետ, գաղութահայ օջախներում պրոպագանդել Հայաստանի նվաճումները, նպաստել սփյուռքահայ աշխատավորների ինտերնացիոնալ դաստիարակության գործին։

ՀՕԿ-ի վարչությունը շնորհակալ աշխատանք կատարեց Հայաստանում նոր ավանների հիմնադրման, ապա՝ արտասահմանից դեպի Հայաստանի աշխատավորների ներգաղթի կազմակերպման ուղղությամբ։

Այսպիսով ՀՕԿ-ը հանդես եկավ որպես հայրենասիրական մեծ եռանդով լցված հասարակական կազմակերպություն և իր գոյության 17 տարիների ընթացքում կատարեց արդյունավետ աշխատանք՝ հօգուտ Սովետական Հայաստանի և հայ ժողովրդի։

Հայաստանի օգնության կոմիտեի առաջին կազմը բաղկացած էր 77 հոգուց, որոնք և հանդիսացան նրա հիմնադիրները։

1921 թ. սեպտեմբերի 18-ին ՀՕԿ-ի հիմնադիր ժողովի (համագումարի) վերջին նիստում հաստատվեց ՀՕԿ-ի ստատուտը։ Նույն նիստում ընտրվեց նախագահություն, անձնափոխորդներ և վերստուգիչ հանձնաժողով։

ՀՕԿ-ի կենտրոնական վարչության նախագահության անդամներ ընտրվեցին՝ Հ. Թումանյանը (նախագահ), Ա. Երզնկյանը, Երվ. Թաղիանոսյանը, Ալ. Պապովյանը, Հով. Մելիքյանը, Կ. Տեր-Օհանյանը, Գ. Վարդանյանը, Դր. Տեր-Սիմոնյանը։ Վերստուգիչ հանձնաժողովի կազմում ընտրվեցին՝ Ս. Կանանյանը, Գ. Պիճիկյանը, Գ. Եվանգուլյանը, Պ. Աբելյանը[4]։

---

1 ՀՍՍՀ Հոկտեմբերյան հեղափոխության և սոցիալիստական շինարարության պետական կենտրոնական արխիվ, ֆ. 178, ց. 1, գ. 2, թ. 28։

2 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 178, ց. 1, գ. 2, թ. 28։

3 Նույն տեղում։

4 Նույն տեղում։

ժողովը հաստատեց ՀՕԿ-ի նախագահության կողմից ընդունած կոչ-դիմումը՝ ուղղված աշխարհի տարբեր մասերում ցրված հայ աշխատավորներին։ Կոչը աշխարհի հայությանը ծանոթացնում էր Հայաստանի և հայ ժողովրդի տնտեսական ծանր վիճակին և ՀՕԿ-ի նպատակներին ու խնդիրներին։

1921 թ. սեպտեմբերի 15-ին ՀՍՍՀ ժողկոմխորհը ընդունեց դեկրետ Հայաստանի օգնության կոմիտեի (ՀՕԿ) հիմնադրման մասին։

Հայաստանի օգնության կոմիտեն, անկախ իր անդամների քաղաքական դավանանքից և կուսակցական պատկանելությունից, իր նպատակներով և կազմակերպման ձևերով ճանաչվեց որպես հասարակական կազմակերպություն և իբրև այդպիսին իրեն հայտարարեց չեզոք՝ քաղաքական և կուսակցական պայքարում։

Համաձայն ստատուտի, ՀՕԿ-ը գտնվում էր բացառապես ժողկոմխորհի հսկողության ներքո։

«Կոմիտեի հասցեով ուղղված դրամները—ասված է ստատուտում,—իրերը և ընդհանրապես ամբողջ գույքը ազատ են պետականացումից, բռնագրավումից և այլ սահմանափակիչ օրենքներից ու միաժամանակ՝ ներքին թե արտաքին փոխադրությունների ընթացքում օգտվում են պետական գույքերին վերապահված արտոնություններով»[5]։

Կոմիտեն իր տրամադրության տակ եղած դրամը և գույքը գործադրում էր ըստ իր հայեցողության՝ ստատուտով նախատեսված նպատակների սահմաններում։

Իր գործունեության ընթացքում կոմիտեն լայն աջակցություն էր գտնում ժողկոմխորհի նախագահի, առանձին ժողկոմների, ինչպես և ընդհանրապես սովետական իշխանության կենտրոնական և տեղական մարմինների կողմից։

Կոմիտեի կենտրոնն էր Երևանը։ ՀՕԿ-ը իրավաբանական ճանաչում ստացավ, և ուներ իր սեփական կնիքը։

ՀՕԿ-ի ստատուտը հաստատվեց նաև ՀՍՍՀ Կենտգործկոմի նախագահության կողմից՝ 1924 թ. հունվարի 11-ին, իսկ ՍՍՀՄ ժողկոմխորհի 1924 թ. հոկտեմբերի 22-ի որոշմամբ, ՀՕԿ-ին իրավունք էր վերապահվում բացելու իր մասնաճյուղերը Միության ամբողջ տերիտորիայում[6], ուր կար հայկական բնակչություն։

1925 թ. հունվարի 23-ին ՀՕԿ-ի գլխավոր վարչության կողմից հաստատվեց ՀՕԿ-ի սովետական ճյուղերի ներքին կանոնադրության նախագիծը։ ՀՕԿ-ի ճյուղերը բացվում էին տեղական, բարեգործական, մշակութային և հասարակական մարմինների կամ գործիչների ու լիազորների նախաձեռնությամբ և իրենց գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՕԿ-ի գլխավոր վարչության ստատուտով ու ՀՕԿ-ի համագումարների որոշումներով։

ՀՕԿ-ի գլխավոր վարչության եռանդուն աշխատանքի շնորհիվ կարճ ժամանակամիջոցում ստեղծվեցին բազմաթիվ մասնաճյուղեր՝ Անդրկովկասում, Ռուսաստանում և Միջին Ասիայում։ Այնուհետև, մինչև 1925 թ. ՀՕԿ-ի ճյուղեր կազմակերպվեցին Եվրոպայի, Ասիայի, Ամերիկայի, նույնիսկ Աֆրիկայի

---

5 «Հրավիրակ», № 1, 1925 թ., Երևան։ («Հրավիրակը» եղել է ՀՕԿ-ի գլխավոր վարչության օրգանը)։

6 «Հրավիրակ», № 1, 1925 թ., Երևան։

հայաբնակ կենտրոններում։ Բավական է ասել, որ մինչև 1936 թ. Եվրոպայում ստեղծվեց ՀՕԿ-ի ավելի քանի 200 մասնաճյուղեր՝ 10 հազար անդամներով։

ՀՕԿ-ի սովետական մասնաճյուղերից հատկապես աչքի ընկան և շնորհակալ աշխատանք կատարեցին Մոսկվայի և Վրաստանի կոմիտեները։

Արտասահմանում ՀՕԿ-ի գծով տարվող աշխատանքի պայմանները միատեսակ չէին։ Կային երկրներ, որտեղ գոյություն ունեին քաղաքական պրոպագանդայի և Հայաստանին օգնություն ցույց տալու տեսակետից համեմատորեն ավելի ազատ պայմաններ։ Սակայն մի շարք երկրներում դաշնակների մատնության հետևանքով ՀՕԿ-ի բազմաթիվ անդամներ տեռորի ենթարկվեցին։ Հնչակյան և ռամկավարական որոշ գործիչներ ուզում էին ՀՕԿ-երը վերածել քաղաքական կազմակերպությունների։ Որոշ փորձեր եղան նաև ՀՕԿ-երի և Կարմիր խաչի միաձուլման ուղղությամբ։ Սակայն դա նույնպես սխալ էր, որովհետև արտասահմանյան Կարմիր խաչի հայկական ընկերություններում տեր ու տնօրեն էին ռամկավարները և հնչակյանները։ Հակառակ դրան, ՀՕԿ-երը արտասահմանում վերածվեցին կազմակերպված կենտրոնների, որոնց միջոցով տարվեց ակտիվ հակադաշնակցական պայքար։ ՀՕԿ-երի լավ աշխատանքի շնորհիվ հայրենակցական միություններից շատերը երես թեքեցին դաշնակներից և ակտիվ դեր խաղացին հայրենիքին օգնություն ցույց տալու գործում։ Ջերմ հավատը, որ ունեին սփյուռքահայ աշխատավորները դեպի Սովետական Հայաստանը, մեծ ուժ էր տալիս ՀՕԿ-երին։ Այդ էր պատճառը, որ չնայած անասելի ծանր պայմաններին, ՀՕԿ-երը արտասահմանում աճեցին և հզորացան։

* *

Սովետական Վրաստանի հայ գործիչները բացի Երևանում ՀՕԿ-ի գլխավոր վարչության կազմակերպմանը ակտիվ մասնակցություն ունենալուց, նախաձեռնեցին և կազմակերպեցին «Հայաստանի օգնության Վրաստանի կոմիտե», որը հանդիսացավ Վրաստանում բացվելիք տեղական բոլոր մասնաճյուղերի կենտրոնը։

ՀՕԿ-ի Թիֆլիսի կոմիտեի հիմնադրումը, որի նախաձեռնությունը պատկանում է Հ. Թումանյանին և Ս. Կասյանին, տեղի ունեցավ 1921 թ. հոկտեմբերի 31-ին։ Ժողովին մասնակցում էին և ակտիվ դեր խաղացին կոմիտեի կազմակերպման գործում՝ Լեոն, Գ. Լևոնյանը, Դ. Դեմիրճյանը, Լ. Թումանյանը, Գ. Մելքոնյանը և ուրիշներ։

Ժողովը լսեց և քննարկեց Հայաստանից վերադարձած ՀՕԿ-ի գլխավոր վարչության հիմնադիր անդամ Հ. Թումանյանի և մյուսների հաղորդումները՝ ՀՕԿ-ի կազմակերպման, նպատակների և խնդիրների մասին։ Նույն օրը ժողովը ստեղծեց ժամանակավոր հանձնաժողով, որի առաջարկությամբ ՀՕԿ-ի Թիֆլիսի կոմիտեն կոչվեց «Հայաստանի օգնության կենտրոնական կոմիտե Վրաստանում»։ Կոմիտեի նախագահության կազմում, իբրև անդամներ, ընտրվեցին 9 մարդ և 3 անձնափոխորդներ[7]։

Կոմիտեի վարչության նախագահ ընտրվեց Ս. Կասյանը, իսկ փոխնախագահներ՝ Լևոն Թումանյանը և Ֆլորա Վարդանյանը։ Վարչության կազմում

[7] ՀՍՍՀ ՀԱՍԾ ՊԿԱ, ֆ. 178, ց. 1, գ. 6, թ. 6։

իբրև անդամներ ընտրվեցին՝ Ս. Խանոյանը, Գարեգին Մելոյանը, Կարապետ Արյանը, Նիկողայոս Սարգսյանը, Անուշավան Ստամբոլցյանը, Արամ Յաղուբյանը, Դարիա Թադևոսյանը, Արշալույս Մխիթարյանը, Արշակ Կուսիկյանը։ Վերստուգիչ հանձնաժողովում ընտրվեցին՝ Հով. Արազյանը (նախագահ), Մաթևոս Դարբինյանը, Նիկողայոս Թերզիբաշյանը։ Ֆինանսական հանձնաժողովի կազմում՝ Մեջլում Տեր-Հարությունյանը (նախագահ), Ռ. Թադևոսյանը (փոխնախագահ), Դ. Ապրիկյանը, Ե. Մյասնիկյան-Կուկուջանյանը, Ա. Կուկուջանյանը, Շ. Մալյանը, Լ. Աֆրիկյանը, Սարգիս Բաղդասարյանը (անդամներ)։

Գյուղատնտեսական հանձնաժողովի մեջ մտան՝ Ս. Հարությունյանը, Ա. Յաղուբյանը, Կ. Արյանը, Ա. Մխիթարյանը, գյուղատնտեսներ՝ Հ. Փիրումյանը, Պ. Կանդուրալյանը, Հ. Փիրումյանը։

Ժողովը ընտրեց նաև շորեր մատակարարող հանձնաժողով և վարչություն՝ բաղկացած 5 հոգուց՝ Ռ. Թադևոսյան, Ա. Յաղուբյան, Դ. Թադևոսյան, Մ. Ծուրինյան, Հ. Առուստամյան։

Հայաստանի օգնության Վրաստանի կոմիտեի սկզբնական կազմը բաղկացած էր 142 հոգուց[8]։

1921 թ. նոյեմբերի 2-ին տեղի ունեցավ Հայաստանի օգնության Վրաստանի կոմիտեի նախագահության անդրանիկ նիստը, որն ընտրեց ժամանակավոր նախագահ (Ս. Հարությունյան), փոխնախագահ (Լ. Թումանյան) և քարտուղար (Ան. Ստամբոլցյան)։

Ժողովը հատուկ դիմումով խնդրեց Վրաստանի Կենտգործկոմին՝ ծանոթանալ Հայաստանի օգնության Թիֆլիսի կոմիտեի խնդիրներին և ստեղծել ազատ պայմաններ կոմիտեի բարեհաջող աշխատանքների համար։

Վրաստանի կառավարությունը հավանություն տվեց Թիֆլիսի կոմիտեի աշխատանքային ծրագրին և հատուկ դեկրետով ճանաչեց Հայաստանի օգնության Վրաստանի կոմիտեի գոյությունը։ Այնուհետև, Համկ(բ)Կ Կովկասի բյուրոյի նույն թվականի դեկտեմբերի 31-ի որոշմամբ, թույլատրվեց Հայաստանի օգնության կոմիտեի գործունեությունը Վրաստանում։

Կովկասի բյուրոն հատուկ ցուցում տվեց և դիմեց Վրաստանի Հեղկոմին Հայաստանի օգնության կոմիտեին և Մերձվոլգյան և Վրաստանի տվյալների օգնության կոմիտեներին ցույց տալ հավասար աջակցություն։

Կոմիտեն իրեն ճանաչեց որպես Երևանի բաժանմունքի ՀՕԿ-ի ճյուղերից մեկը և ղեկավարվում էր ՀՕԿ-ի կողմից մշակված հիմունքներով։ Անցել էր որոշ ժամանակ, երբ Թիֆլիսի կոմիտեն կատարեց իր ստատուտի մշակման համար լրացուցիչ քննություն, ներկայացնելով այն ժողովին ի հաստատություն, որի համար ընտրեց հանձնաժողով՝ 4 հոգուց բաղկացած։ Հանձնաժողովի մեջ մտան Ս. Հարությունյանը (նախագահ), Ղ. Տեր-Ղարագյոզյանը, Ն. Սարդսյանը, Լ. Թումանյանը (անդամներ)[9]։

Թիֆլիսի կոմիտեում ակտիվ աշխատանք են կատարել նաև Ավ. Իսահակյանը և Լեոն, որոնք կոմիտեի անդամներ էին[10]։

---

8 ՀՍՍՀ ՀԱԾ ՊԿԱ, ֆ. 178, ց. 6, գ. 6, թ. 20։
9 Նույն տեղում։
10 Տե՛ս նույն տեղում։

Հայաստանի օգնության Վրաստանի կոմիտեն ստեղծեց Հայաստանի գյուղատնտեսության զարգացմանն օժանդակող մարմիններ։ Կազմակերպվեց գյուղատնտեսական պահեստներ՝ Լենինականում և Ստեփանավանում, որոնք մեծ նշանակություն ունեին հայ գյուղացիությանն օգնություն ցույց տալու գործում։

Վրաստանի կոմիտեն անհրաժեշտ համարեց կազմակերպել լայն հասարակայնության աջակցությունը Հայաստանի էկոնոմիկայի, մասնավորապես գյուղատնտեսության, վերականգնման համար։ Կոմիտեի անհետաձգելի և առաջնահերթ խնդիրն էր՝ Վրաստանի հայ բնակչությանը ծանոթացնել Հայաստանի ընդհանուր վիճակին, երկրին սպառնացող վտանգին, տնտեսական ուժերին և այն միջոցներին, որոնցով կարելի էր վերաշինել երկիրը։ Մի խոսքով, Վրաստանի կոմիտեի նպատակն էր՝ հանրապետությունում ապրող հայերի ուշադրությունը բևեռել Սովետական Հայաստանի տնտեսական վիճակը բարելավելու գործի վրա։ Դեռ ավելին, կոմիտեն կազմակերպչական և պրոպագանդիստական լայն աշխատանք տարավ, որպեսզի երկրից դուրս գտնվող հայությունը նույնպես իր նպաստը բերի Սովետական Հայաստանի բարգավաճման գործին։ Հայաստանի օգնության կոմիտեի Վրաստանի ճյուղը հրապարակեց «Օգնիր Հայաստանին» միօրյա թերթը, որը տարածվեց Թիֆլիսում և նրա գավառներում։ Բացի դրանից, կոմիտեն ձեռնարկեց ժողովածու հրատարակելու գործը, որը սակայն, որոշ պատճառներով, գլուխ չեկավ։ Ժողովածուի համար պատրաստած հոդվածներից երեքը՝ Հ. Մելիք-Փաշայանի՝ «Հայաստանի ջրային հարստությունը», Հ. Փիրուլյանի՝ «Հայաստանի երկրագործական արդյունաբերությունը» և Ա. Թադևոսյանի՝ «Հայաստանի անտառները և նրանց նշանակությունը» տպագրվեցին «Նոր աշխարհ» ամսագրում։ Անդրադառնալով Հայաստանի բնական հարստություններին, հոդվածագիրները, միաժամանակ, ցույց են տվել հայ ժողովրդի ծավալած ստեղծագործական լայն աշխատանքը սովետական իշխանության պայմաններում։

Կոմիտեն պրոպագանդիստական և ինֆորմացիոն նպատակներով կազմեց մի ընդարձակ զեկուցում, որտեղ խոսվում էր երկրի շինարարական խնդիրների և դրանց լուծման միջոցների մասին։ Այդ զեկուցումները կոմիտեն ուղարկեց արտասահմանի հայկական ընկերություններին ու հաստատություններին և այնտեղ լույս տեսնող պարբերական հրատարակությունների խմբագրություններին։

Այսպիսով, Հայաստանի օգնության Վրաստանի կոմիտեն հայ ժողովրդին օգնություն կազմակերպելու գործի մի զգալի մասը վերցրել էր իր վրա, օգնելով ՀՕԿ-ի կենտրոնին՝ ընդհանուր ուժերով հոգալու Հայաստանի կարիքները։

Պետք է նշել, որ կոմիտեի գործունեության մասին հաճախակի տեղեկություններ են տպագրվել տեղական հայերեն և ռուսերեն լեզուներով լույս ընծայվող մամուլներում։ Նույն պրոպագանդայի և ինֆորմացիայի նպատակով, կոմիտեի անդամներին գործերի դրության մասին ծանոթացնելու, և ապա՝ կապը կենտրոնի հետ ամուր պահելու համար, բացի տարեկան ընդհանուր ժողովներից, հաճախակի կայացել են եռամսյա ժողովներ։

Վրաստանի հայությանը Հայաստանի վերաշինության գործի հետ կապելու և նրա ակտիվ մասնակցությունն ապահովելու գործում մեծ էր պարբերաբար կազմակերպված ներկայացումների և երեկույթների դերը։ Նման

միջոցառումներ Վրաստանի կոմիտեն կազմակերպել է նաև հանրապետության մյուս քաղաքներում ու շրջաններում բնակություն հաստատած հայերի մեջ։ Այսպես, օրինակ, կոմիտեն հատուկ նամակներով և շրջաբերականներով գործնական կապերի մեջ մտավ Ախալքալաքի, Ախալցխայի, Բաթումի, Գորիի, Թելավի, Քութայիսի, Սղնախի և Սուխումի հայ գործիչների հետ՝ տեղական ճյուղեր կազմակերպելու համար։

ՀՕԿ-ի նախագահության, ինչպես նաև Թիֆլիսի կոմիտեի կողմից ձեռք առնված միջոցառումները իզուր չանցան։ 1921—1922 թթ. տեղական, հասարակական և սովետական աշխատողների միջոցով (ՀՕԿ-ի Վրաստանի ճյուղի ներկայացուցիչների մասնակցությամբ) Բաթումում, Սուխումում, Ախալցխայում կազմակերպվեցին տեղական կոմիտեներ։ Ախալցխայի ճյուղը կազմակերպվեց 1922 թ. վերջերին՝ ականավոր հայագետ Ստ. Մալխասյանի նախաձեռնությամբ։

Սուխումում հայերի մեջ օգտակար աշխատանք կատարեց Աբխազիայի աշխատավոր հայերի մշակութային-կրթական միությունը, որի հետ Թիֆլիսի կոմիտեն սերտ կապեր հաստատեց։ Ահա այդ միության նախաձեռնությամբ Աբխազիայում ստեղծվեց Հայաստանի օգնության կոմիտեի ճյուղը։ Միությունը հատուկ լիազորներ ուղարկեց Աբխազիայի շրջանները աշխատավորական համագումար նախապատրաստելու նպատակով։ 1921 թ. դեկտեմբերի 25-ին տեղի ունեցավ Բաթումի հիմնարկությունների ներկայացուցիչների և հասարակական գործիչների ընդհանուր ժողովը։ Օրակարգում դրված էին հետևյալ հարցերը՝ Հայաստանի օգնության Բաթումի ճյուղի ժամանակավոր կոմիտեի հաշվետվությունը, Հայաստանի օգնության մշտական կոմիտեի կազմակերպումը, նախագահության կազմը և վերստուգիչ հանձնաժողովի ընտրությունները, ընթացիկ հարցեր[11]։

Ժողովը որոշեց Աջարիայում հիմնել Հայաստանի սովյալներին օգնող կոմիտե՝ 75 հոգուց բաղկացած։ Նույն թվականի դեկտեմբերի 27-ին տեղի ունեցավ այդ կոմիտեի նախագահության անդրանիկ նիստը, որտեղ լսվեց մասնավորապես Միջագետքի հայ գաղթականների պարենավորման հարցը։

Աջարիայի ՀՕԿ-ի հիմնական խնդիրն էր՝ օգնել Սովետական Հայաստանի կառավարությանը արտասահմանից ներգաղթ կազմակերպելու գործում։ ապա գաղթականներին ցույց տալ նյութական և բժշկական օժանդակություն, մինչև Հայաստան տեղափոխվելը։

1922 թ. ամռանը զանազան տեղերից, գլխավորապես Հյուսիսային Կովկասից, մեծ թվով գաղթականներ էին եկել Թիֆլիս՝ Հայաստան անցնելու համար։ Բաթումի կոմիտեն աշխատանք տարավ Միջագետքից եկած 7000 գաղթականներին Հայաստան տեղափոխվելու, ապա՝ Կ. Պոլսից ստացված 25 հազար փութ սերմացուն, ալյուրը, հացահատիկը փոխադրելու ուղղությամբ[12]։ Բացի այդ Բաթումի կոմիտեն կազմակերպեց աշխատանքային բյուրո, որի խնդիրն էր սնգործներին տեղավորել համապատասխան աշխատանքի։

Բաթումի կոմիտեն օգնում էր Վրաստանում, գլխավորապես Թիֆլիսում և Բաթումում կուտակված գաղթականներին, որոնք գտնվում էին նյութական

---

11 ՀՍՍՀ ՀԱԿ, ֆ. 178, ց. 9, գ. 295, թ. 6։
12 ՀՍՍՀ ՀԱԿ, ֆ. 178, ց. 1, գ. 295, թ. 6։

ծանր պայմաններում։ Կոմիտեն նյութական օգնություն էր ցույց տալիս ոչ միայն գաղթականներին, այլ նաև մտավորականություններ, գլխավորապես ուսուցիչներին, դերասաններին, գրականագետներին, որոնք դեռևս չէին աշխատում և կարիքի մեջ էին։ Այդ նպատակով կոմիտեի կազմում ստեղծվել էին հատուկ հանձնաժողովներ։ Հագուստեղեն մատակարարող հանձնաժողովը, օրինակ, հագուստեղեն գնեց ամերիկյան կոմիտեից և այն բաշխեց մտավորականներին, տեղական հայ աղքատ ընտանիքներին, գաղթականներին, մատչելի գներով, իսկ շատ կարիքավորների ձրի։

Հանձնաժողովը աշխատում էր կոմիտեի նախագահության հսկողությամբ, որի համար կոմիտեն մշակեց հատուկ կանոններ և հրահանգներ, հագուստեղենի բաշխման եղանակի մասին։ Այս միջոցով հագուստ ստացան 1980 մարդ, որոնցից 1000-ը գաղթականներ էին։

Կոմիտեն Վիեննայի և Բուխարեստի հայ գաղութներից ստացավ հագուստեղեն, կոշկեղեն, կտավ և այն բաժանեց Թիֆլիսի և Բաթումի կարիքավոր ուսուցիչներին, ապա եռանդուն աշխատանք սկսեց մանուֆակտուրայի հայթայթման և բաշխման համար։ Այդ նպատակով բանակցություններ վարեց Մոսկվայի տեքստիլ սինդիկատի Թիֆլիսի բաժանմունքի հետ և որոշ դիջումով նրանից գնեց մանուֆակտուրա։ Մանուֆակտուրայի վաճառքի գործը՝ կոմիտեն հանձնարարեց հին շորերի վաճառքով զբաղվող հանձնաժողովին[13]։

Կոմիտեն գաղթականներին և կարիքավորներին օգնեց նաև հացով ու ալյուրով։ Օրինակ, 1921 թ. հունվարից մինչև 1922 թ. սկիզբը 1050 հոգի ալյուր ստացան։

Բացի այդ, կոմիտեն կարիքավորներին ցույց տվեց բժշկական օգնություն, տեղավորելով շատ գաղթականների քաղաքային հիվանդանոցում։ Թիֆլիսի վանքի բակում կազմակերպվեց ամբուլատորիա, որը օրական 40 հիվանդների բժշկական օգնություն էր հասցնում (Սաբուրթալոյում և Օրթաճալայում բնակվող գաղթականներին)։

Այս ամբողջ օգնության հիմքը և միջոցները եղել են հանգանակությունները և նվիրատվությունները, երեկույթներից և ներկայացումներից ստացված եկամուտները։

Անդրադառնալով կոմիտեի բուն նպատակին՝ պետք է ասել, որ նա իր հիմնական ուշադրությունը բևեռեց երկրի վերաշինության գործին։ Նկատի ունենալով, որ Հայաստանը գյուղատնտեսական երկիր էր, որը գտնվում էր ծանր վիճակում, կոմիտեն հիմնեց գյուղատնտեսական ֆոնդ, որի համար բացեց Հայաստանի գյուղատնտեսության զարգացման օժանդակող պահեստներ՝ Լենինականում, Ստեփանավանում և Դիլիջանում։

Հայ գյուղացիությունը կարիք ուներ սերմացուի, գյուղատնտեսական գործիքների, լծկան անասունների, բուժիչ միջոցների։ Միայն կոմիտեի միջոցները, իհարկե, քիչ էին այդ պահանջները բավարարելու համար, ուստի նա բանակցություններ վարեց ամերիկյան կոմիտեի հետ՝ որոշ օժանդակություն ստանալու նպատակով։ Պետք է նշել, որ այդ առթիվ կոմիտեի և Ամերկոմի միջև 1923 թ. մարտի 20-ին կայացավ համաձայնություն, ըստ որի՝ յուրաքանչյուր կողմ պարտավորվեց ստեղծել գյուղատնտեսական ֆոնդ՝ 5000 դոլար,

13 ՀՍՍՀ ՀԱՀԾ ՊԿԱ, ֆ. 178, դ. 1, գ. 295, թ. 47։

ընդամենը 10 հազար դոլար։ Հետագայում, այդ ֆոնդի մեծացման նպատակով Հայաստանի օգնության կոմիտեի թույլտվությամբ, մի շարք շրջաններում հիմնվեցին պահեստներ։

Գյուղացիներին գյուղգործիքներ և սերմացու մատակարարելը կատարվեց վճարով, իրերի ինքնարժեքով, ավելացրած դրան նաև կատարված ծախքերը։ Ապրանքները ապառիկ բաց թողնելու դեպքում նրանց արժեքը ապահովվում էր բերքով կամ այլ միջոցներով։

Իր այդ նպատակը իրագործելու համար կոմիտեն սերտ կապի մեջ մտավ ՀՍՍՀ հողժողկոմատի հետ և նրանից ստացավ օժանդակություն։ Բացի այդ, կոմիտեն բանակցություններ սկսեց Մոսկվայի և Ռոստովի համապատասխան գործարանների հետ, ստանալով օգտակար և անհրաժեշտ գյուղատնտեսական գործիքներ (գերանդի, գութան և այլն)։

Գյուղատնտեսական ֆոնդի բաշխման աշխատանքներն ընթացան հետևյալ կերպ. կոմիտեն ընտրեց հատուկ հանձնաժողով՝ բաղկացած լավագույն մասնագետներից։ Այդ հանձնաժողովը նախօրոք ծանոթանում էր գնվելիք ապրանքների տեսակների հետ և որոշում ստացվող ապրանքի քանակը։

Կոմիտեն գյուղատնտեսական գործիքներով և ապրանքներով ապահովեց Լենինականի, Կիրովականի, ինչպես նաև Ախալքալաքի գյուղացիներին, որոնք գտնվում էին ծանր պայմաններում։

Կոմիտեի գյուղատնտեսական ֆոնդը ուժեղացնելու համար ՀԿԿ-ը 1924 թ. հուլիսի 2-ին հրավիրեց հատուկ խորհրդակցություն, որին մասնակցում էին նաև ՀՍՍՀ հողժողկոմը և գյուղբանկի նախագահը[14]։

Կոմիտեին կից ստեղծված պահեստը (Լենինականում) խոշոր դեր խաղաց նաև տեղական շուկայում, ազդելով մասնավոր առևտրի վրա։ Երբ պահեստը սկսեց վաճառել մեծ թվով գերանդիներ և այլ գործիքներ, մասնավոր առևտրականները հարկադրված եղան իջեցնել իրենց ապրանքների գները։

Կոմիտեն օգնեց գյուղացիությանը ոչ միայն սովորական գյուղատնտեսական գործիքներով, այլև սերմացուով, զտիչ մեքենաներով և կալսիչներով։ Շինարարական նյութերով։ Կոմիտեն լայն օգնություն ցույց տվեց նաև մեղվաբուծության և կաթնատնտեսության զարգացմանը։

1923 թ. կոմիտեն նոր պահեստներ հիմնեց Ղարաքիլիսայում, Շամշադինում և Դիլիջանում։

1923 թ. փետրվարի 1-ին հրավիրվեց կոմիտեի ընդհանուր ժողով, որը որոշեց հրապարակել մի ժողովածու՝ Հայաստանի տնտեսական և մշակութային կյանքի վերաբերյալ։ Իր հիմնած գյուղատնտեսական ֆոնդի նյութական բազան ուժեղացնելու նպատակով փետրվարի 13-ին կոմիտեն կազմակերպեց երեկույթ-ներկայացում կարմիր բանակի ակումբում։ Կոմիտեն զուտ տեղական ուժերից կազմակերպեց գյուղատնտեսական, բժշկական, իրավաբանական և տեխնիկական սեկցիաներ, ստեղծվեցին հատուկ վարկեր բանկային, առևտրական հիմնարկներում և շրջաններում, որոնց միջոցով կատարվում էր գնումներ և այլ գործարքներ[15]։

Մինչև 1923 թ. սկիզբը կոմիտեն գնեց և Ալեքսանդրապոլ, Ղարաքիլիսա և Դիլիջան ուղարկեց մեծ թվով գյուղատնտեսական գործիքներ՝ գերանդիներ,

---

14 ՀՍՍՀ ՀԱԱԾ ՊԿԱ, ֆ. 178, ց. 74. թ. 1—3։
15 ՀՍՍՀ ՀԱԱԾ ՊԿԱ, ֆ. 178, ց. 1, գ. 107. թ. 23։

օղակներ, լաններ, մուրճեր, թիակներ, գութաններ, քամահար մեքենաներ, փոցխեր, կալսիչ, ղտիչ, հնձող խարիսխ պատրաստող մեքենաներ, մեղվաբուծական գործիքների կոմպլեկտներ՝ փեթակներ, փեթակների շրջանակներ, թոկ և այլն։

Աջարիայի կոմիտեն մինչև 1924 թ. ապրիլ ամիսը Երևան ուղարկեց 13 վագոն զանազան մթերքներ՝ ալյուր, դարի, ցորեն և այլն[16]։

Մեծ էր կոմիտեի դերն ու նշանակությունը ժողովրդի առողջապահության ասպարեզում։ Կոմիտեն, որպես նվեր, Եգիպտոսի բարեգործական ընկերությունից ստացավ խինին և մասնակցեց մալարիայի դեմ մղվող պայքարին։ Կոմիտեն դիմեց զանազան բժշկական հաստատություններին՝ կոչ անելով կազմակերպել ճահիճների չորացման գործը։

Ահա, այն ամենը, ինչ կարողացավ կատարել կոմիտեն իր գոյության համեմատաբար կարճ ժամանակամիջոցում։ Կոմիտեի կողմից տարված օգտակար աշխատանքների արդյունքները ամփոփվեց 1925 թ. փետրվարի 7-ին Թիֆլիսում գումարված ՀՕԿ-ի Վրաստանի բաժանմունքի ընդհանուր ժողովում։ Ժողովը լսեց վարչության նախագահ Ս. Հարությունյանի զեկուցումը՝ կոմիտեի գործունեության մասին և բարձր գնահատեց կատարած աշխատանքը։ Ժողովի արձանագրության մեջ ասված է. «Կոմիտեն իր եռանդուն աշխատանքով կարողացավ իրագործել իր ծրագիրը, գյուղատնտեսական ֆոնդի իրագործումը»[17]։

1925 թ. մայիսին ի հավերժացումն սովետական պետության ականավոր գործիչ Ալ. Ֆ. Մյասնիկյանի հիշատակի՝ Հայաստանի օգնության Վրաստանի կոմիտեն հիմնեց «Ալ. Մյասնիկյանի անվան ֆոնդ», որին հավանություն տվեց Վրացական ՍՍՀ ժողկոմխորհը[18]։

* *
*

1925 թ. վերջերին Հայաստանի օգնության Վրաստանի կոմիտեի գործունեությունը դադարեց։

1937 թ. դեկտեմբերի 3-ին ՀՍՍՀ կառավարության որոշմամբ, լիկվիդացվեց ՀՕԿ-ի գլխավոր վարչությունը, դրանով իսկ դադարեցին գործելուց ՀՕԿ-ի բոլոր ճյուղերը ամբողջ աշխարհում։

Իր գոյության 17 տարիներում ՀՕԿ-ը դրական նշանակություն ունեցավ հայ ժողովրդի կյանքում։ ՀՕԿ-ի գործիչները ակտիվ աշխատանք կատարեցին արտասահմանի հայ «գաղութներում»։ Ս. Տեր-Գաբրիելյանը բարձր գնահատելով ՀՕԿ-ի դերը, նշել է, որ ՀՕԿ-ը հանդիսանում է գաղութահայության մեջ Խորհրդային Հայաստանի ամենաջերմ բարեկամը և նրա տնտեսական, քաղաքական, կուլտուրական վերելքը պրոպագանդող գրեթե առաջին և միակ հասարակական կազմակերպությունը։

---

16 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 178, ց. 1, գ. 295, թ. 44—47։
17 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 178, ց. 1, գ. 295, թ. 47։
18 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 178, ց. 1, գ. 343, թ. 63։

* *
*

Սովետական Վրաստանում բնակություն հաստատած հայությունը, ՀՕԿ-ի Վրաստանի կոմիտեի միջոցով, բարեկամական, եղբայրական անկեղծ կապերի մեջ մտավ Հայաստանի աշխատավորների հետ և կատարեց հասարակական օգտակար աշխատանք հօգուտ հայ ժողովրդի։

Հայաստանի օգնության Վրաստանի կոմիտեն իր ստեղծման պահից հանդես եկավ գյուղատնտեսական, մշակութային-կրթական, առողջապահական և հասարակական օգտակար ֆոնդ հիմնելու ծրագրով, համապատասխանեցնելով այն տվյալ ժամանակի պահանջներին։